ՀԱՄԻՏԵԱՆ «ԶՈՒԼՈՒՄԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԴՈԿՏ. Ա. Հ. ԹՈՓԱԼԵԱՆ

Հայ-արաբական մշակութային յարաբերութիւնների զարգացման եւ ուժեղացման մէջ իր իւրայատուկ դերն ունի արաբական պատմագրութիւնը։

Արաբական արդի պատմագրութեան մէջ զգալի տեղ է յատկացուած Հայաստանի, հայ ժողովրդի եւ մասնաւորապէս Հայկական Հարցի, հայկական ջարդերի եւ Մեծ Եղեռնի պատմութեանը։ Այդ պատմութեան մէջ իւրայատուկ բաժին է կազմում Ապտիւլ Համիտ Բ.-ի կառավարման շրջանը (1876–1909)։

Դա իրաւամբ «զուլումի» ժամանակաշրջան էր, որը հայ ժողովրդին պատճառեց ահաւոր ջարդեր։ Իրենց գործերում արաբ ժամանակակից պատմաբանները մերկացնում են Ապտիւլ Համիտ Բ.-ի վարած «զուլումի» քաղաքականութիւնը։

Նրանք սուլթանի իրագործած խարդախ քաղաքականութիւնը հայերի նկատմամբ քննարկում են նրա վարած ազգային քաղաքականութեան շրջագծի մէջ։ Այս հանգամանքը հնարաւորութիւն է տալիս առաւել առարկայօրէն գնահատել Ապտիւլ Համիտի քաղաքական ծրագրի էութիւնը, գտնել Հայկական Ցեղասպանութեան պատճառները եւ դրա իրականացման հիմունքները։ Ուշագրաւ են արաբ հեղինակների այն աշխատութիւնները, որոնք նուիրուած են հայ ժողովրդի ամբողջական պատմութեան, կամ ընդգրկում են հայ ժողովրդի պատմութեան հետ առընչուած այս կամ այն խնդիրը։

Այստեղ յիշատակման արժանի են՝ Օսման աթ-Թուրքի[1], *Մրուան ալ-Մուտաուարի*[2], *Ֆուատ Հասան Հաֆիզի*[3], *Սամիր Արպաշի*[4], *Մուսա Փրենսի*[5], *Սալէհ Զահր ատ-Տինի*[6] *եւ այլոց ուսումնասիրութիւնները։*

Ինչպէս յայտնի է՝ ԺԹ. դարի սկզբներում արեւելահայութեան բախտը սերտօրէն առընչուեց Ցարական Ռուսաստանի հետ՝ 1828-ի Փետրուարին կնքուած Թուրքմենչայի պայմանագրով: Արեւելեան Հայաստանը ազատագրուեց պարսկական դարաւոր լծից եւ միացաւ Ռուսաստանին:

Արեւմտեան Հայաստանը մնաց օսմանեան տիրապետութեան տակ, իսկ արեւմտահայութեան պատմական ճակատագիրը դաժան ընթացք ունեցաւ:

Տասնիններորդ դարի վերջերում, 1877-1878 թուականներին, ռուս-թրքական պատերազմից յետոյ առաջ եկաւ Հայկական Հարցը, որպէս Թուրքիայում Արեւմտեան Հայաստանի նահանգների հայ բնակչութեան ապահովութեան հարց: Այս հարցը նախ իր արտայայտութիւնը գտաւ 1878-ի Փետրուարին Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ Սան Ստեֆանոյում կնքուած պայմանագրի 16-րդ յօդուածում, ապա այդ նոյն թուականին Պերլինի Վեհաժողովի ընդունած 61-րդ յօդուածում:

Այսպէս՝ Հայկական Հարցը միջազգային բնոյթ ընդունեց:

Թէ՛ առաջին, եւ թէ՛ երկրորդ պայմանագրերի մէջ Հայկական Հարցին նուիրուած յօդուածի էութիւնը այն էր, որ Բարձրագոյն Դուռը պարտաւորւում էր Արեւմտեան Հայաստանի նահանգներում գործադրել տեղական պահանջներից բխող բարեփոխութիւններ եւ երաշխաւորել հայ բնակչութեան ապահովութիւնը քրտական եւ չերքէզական վտանգներից: Այդ բարենորոգումների գործադրութիւնը պէտք է հսկէին Ցարական Ռուսաստանը եւ եւրոպական մեծ պետութիւնները:

1876-ին սուլթան դարձած Ապտիւլ Համիտ Բ.-ը Սան Ստեֆանոյի եւ Պերլինի ժողովներից յետոյ «դեռ նոր-նոր պիտի սկսէր ցուցադրել իր բնաւորութեան ճիւաղային գծերը»[7]: Նա «իր ձեռքն է առնում կառավարութիւնը եւ սկսում է այն դաժան ռեժիմը, որ նրա թագաւորութեան յատկանիշն էր կազմում»[8]:

Թէ՛ Սան Ստեֆանոյի, եւ թէ՛ Պերլինի պայմանագրերի մէջ տեղ գտած յօդուածով Հայկական Հարցը ցանկալի լուծում չստացաւ եւ «1878-ի Պերլինի պայմանագրի համաձայն Հայկական Հարցը փաստօրէն թողնուեց ճակատագրի քմահաճոյքին, ինչից եւ չյապաղեց օգտուել սուլթան Ապտիւլ Համիտը»[9]: Նա լսել անգամ չէր ուզում հայերին տրուելիք բարենորոգումների մասին: Եւ պատահական չէր, որ իր մեծ վեզիր Քիամիլ փաշայի հետ մշակեց որոշակի մի ծրագիր, որով նախապատրաստում էր բնաջնջել արեւմտահայութիւնը՝ մէկ ընդմիշտ վերջ դնել Հայկական Հարցին: «Մի ծրագիր էր այս սուլթան Համիտի հրէշային ուղեղում բուն

դրած, մի սիստեմ, որը ստացաւ «Համիտականութիւն» անունը, մի սիստեմ, սակայն, որին չէր վիճակուում գաղտնիքների աշխարհում երկար մնալու ճակատագիրը»[10]:

1878-ին Ապտիւլ Համիտի մեծ վեզիր Քիամիլ փաշան ելոյթ ունենալով Հայկական Հարցի շուրջ՝ ձեւակերպեց այդ ծրագիրը: Նա ցինիկաբար յայտարարեց. «... Հայ ազգը վերացնելու, անհետ եւ անճէտ ընելու ենք: Եւ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամէն գործիք պատրաստ ունինք — քիւրտ, չերքէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ. կրօնական պատերազմ մը կը հրապարակենք, եւ դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ՝ որ ոչ զէնք ունի, ոչ զինուորութիւն, եւ ո՛չ պաշտպան... Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի եւ քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտռէ եւ չգտնէ Տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հանգիստ եւ այն ատեն կը զբաղինք ներքին գործերով եւ բարեկարգութեամբք»[11]:

Ահա այս ծրագիրը դարձաւ առանցքը Հայկական Հարցում Ապտիւլ Համիտի քաղաքականութեան: Օսմանեան կառավարութեան այդ յայտարարութեանը յաջորդեցին աւելի որոշակի միջոցառումներ:

«Թուրքական կառավարութիւնը սկսեց նրանից, որ «Հայաստան» բառը փոխարինեց «Քուրտստանով» կամ «Անատոլիայով»: 1880-ի Օգոստոսի 30-ի հրամանով պաշտօնական փաստաթղթերում արգելւում էր օգտագործել «Հայաստան» բառը: Դրանով իսկ Բարձր Դուռը հասկացնել էր տալիս մեծ տէրութիւններին, որ Հայկական Հարց գոյութիւն չունի: Սուլթանական կառավարութիւնը ջանք չէր խնայում հայերով բնակեցուած հողերի զանգուածային զաւթումների ճանապարհով արեւմտահայ աշխատաւոր գիւղացիութեանը տնտեսապէս քայքայելու եւ հարազատ վայրերը լքել տալու համար: Միւս կողմից, կառավարութիւնը մշտապէս թշնամանք էր սերմանում հայերի, թուրքերի, քրտերի ու չերքէզների միջեւ, թոյլ չտալով նրանց միաւորուել օսմանեան լծի դէմ մղած պայքարում:

«... Այդ նոյն շրջանում թուրք կառավարողները վերցրել էին հայ ժողովրդի պատմամշակութային օջախները ոչնչացնելու, հայկական մշակոյթի զարգացումը խիստ սահմանափակելու եւ խափանելու ուղղութիւն: Կառավարութիւնը հսկողութիւն էր սահմանել հայկական լուսաւորչական հիմնարկների, մասնաւորապէս դպրոցների վրայ, փակել այն դպրոցները, որոնք բացուել

էին առանց սուլթանի ֆիրմանի (հրամանի)։ Հայկական բոլոր եկեղեցիները հիմնաւորապէս խուզարկուել էին ոստիկանութեան կողմից՝ զէնք գտնելու նպատակով։

«Կոստանդնուպոլսում եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքներում փակուել էին մի շարք հայկական թերթեր, թատրոններ, հասարակական կազմակերպութիւններ, հրատարակչութիւններ եւ այլն։ Արգելուել էին Հայաստանի պատմութեան դասաւանդումը, ժողովները, դասախօսութիւնները եւ այլն»[12]։

Արաբ արդի պատմաբանները հանգամանօրէն անդրադարձել են Ապտիլ Համիտ Բ.-ի հաստատած վարչակարգի բնութագրմանը ու գնահատմանը։ Նրանք միանգամայն դիպուկ են գնահատել այդ ռեժիմը։ Այն նկատել են որպէս «Զուլումի «Համիտեան» բռնակալութեան» ռեժիմ։

Նրա վարչաձեւը այդպէս է բնութագրում արաբ ժամանակակից պատմաբան Սամիր Արպաշը իր Հայաստան — Հող եւ ժողովուրդ գրքի՝ «Հայերը եւ Ապտիլ Համիտ» բաժնում, որտեղ որոշակիօրէն ընդգծուած է, թէ «Ապտիլ Համիտ Բ.-ի շրջանը անուանուեց Համիտեան բռնակալութեան շրջան»[13]։ Նոյն միտքն է շեշտում նաեւ եգիպտացի պատմաբան Ֆուատ Հաֆիզը[14]։

Արաբական արդի պատմագրութեան մէջ Ապտիլ Համիտ Բ. ստացել է Կարմիր Սուլթան՝ «Ասֆ-Սուլթան ալ-Ահմար» անուանումը։ Սամիր Արպաշը շեշտում է, որ «Ապտիլ Համիտ Բ.ը անուանւում է «Կարմիր Սուլթան», որովհետեւ ներկայացրեց բռնակալութեան, զուլումի եւ յետադիմութեան գագաթնակէտը»[15]։

Նոյն կարծիքին է նաեւ եգիպտացի պատմաբան Ֆուատ Հաֆիզը[16]։

Սիրիացի պատմաբան Մրուան ալ-Մուտաուաբը նշում է, թէ «այս սուլթանը, որը նոյնպէս եւ իրաւացիօրէն անուանւում է Կարմիր Սուլթան՝ 33 տարիների ընթացքում երկաթեայ ձեռքով իշխեց Օսմանեան Կայսրութիւնը։ Նրա բռնակալական իշխանութիւնը հարուածում էր կայսրութեան բոլոր ժողովուրդներին, մասնաւորապէս դրանցից արաբական ժողովուրդներին, պալքանեան ժողովուրդներին եւ հայ ժողովրդին»[17]։

Արիւնարբու սուլթանը 1890-ական թուականներից ծաւալեց իր հակահայ ջարդարարական քաղաքականութիւնը, որը մաս կազմեց իր ընդհանուր ներքին ազգային քաղաքականութեան։

Լիբանանցի պատմաբան-իրաւաբան Մուսա Փրենսը միանգամայն ճիշդ նկատում է, որ «... գերման քաղաքականութենէն քաջալերուած՝ Կարմիր Սուլթանը օգտուեցաւ իբրեւ թէ դաշնակից

Մեծ Տէրութիւններու հակամարտութիւններէն՝ հայերու հանդէպ որդեգրելով կեղեքումներու եւ ծրագրուած ջարդերու քաղաքականութիւն մը։ Այդպիսով, արտօնութիւն տրուած եղաւ իրեն կազմակերպելու Հայասպանութիւնը, որ տեւեց երեսուն տարի»[18]։

Պատմագիտական գրականութեան մէջ մտցնելով այս նոր անուանումը՝ Հայասպանութիւնը (L'Armenocide), Մուսա Փրենը 1890-ական թուականներուն հայկական ջարդերը անուանում է «Համիտեան Հայասպանութիւն»[19]։

Արաբ պատմաբաններուն աշխատութիւններում յատուկ տեղ է տրուած Ապտիւլ Համիտ Բ.-ի վարած ներքին քաղաքականութեան գնահատմանը։ Նրանք ընդգծում են, որ այդ քաղաքականութիւնը ապաւինած էր ամէն տեսակի չարագործութիւնների վրայ եւ, որ նա լռեցնում էր բոլոր ձայները, ճնշում ազատութիւնները եւ պայքարում էր ընդդիմութիւնների եւ պահանջուող որեւէ բարենորոգումի դէմ[20]։

Սուլթանական Թուրքիայում Ապտիւլ Համիտ Բ.-ի տիրապետութեան շրջանին ծանր էր ոչ թուրք ժողովուրդների, մասնաւորապէս քրիստոնեայ ժողովուրդների, այդ թւում նաեւ հայերի վիճակը։ Նրանք բոլորն էլ համարւում էին ռայա, գերի, ստրուկ։

Այս կապակցութեամբ՝ սիրիացի պատմաբան Օսման աթ-Թուրքը իր Էջեր Հայ ժողովուրդի Պատմութիւնից գրքում այն կարծիքն է յայտնում, թէ այդ ժամանակ օսմանցի «կառավարողների ուղեղում յաղթանակել էր ռասայական եւ ցեղային քաղաքականութիւնը»[21]։

Ապտիւլ Համիտ Բ.-ի ներքին քաղաքականութեանը բնորոշ էին դաւադրութիւնը, խարդաւանանքը, խարեբայութիւնը եւ ջարդը։ Հայ ժողովրդին հալածելն ու ջարդելը դարձել էր Համիտեան բռնակալութեան պետական քաղաքականութիւնը, որովհետեւ սուլթանը պահանջում էր վերջ տալ Հայկական Հարցին՝ արմատախիլ անելով բոլոր հայերին։

Այդ մարդակեր քաղաքականութեան իրագործման վկայութիւնն էին 1894-1896 թ.թ. ջարդերը, որոնց զոհ գնացին 300·000 հայեր։

Այս կոտորածներին անդրադարձել է նաեւ արաբական արդի պատմագրութիւնը։

Ինչպէս յայտնի է՝ թէ՛ Սան Ստեֆանոյի 16-րդ յօդուածով, եւ թէ՛ Պերլինի 61-րդ յօդուածով նախատեսուող բարենորոգումները կեանքի չկոչուեցին։

Մեր նպատակը չէ այստեղ ներկայացնել դիւանագիտական բանակցութիւնները, որ վարում էին Թուրքիան, Ցարական Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան եւ Գերմանիան Հայկական հարցի շուրջ եւ տալ 1894–1896-ի կոտորածների մանրակրկիտ նկարագրութիւնը, որ տեղ է գտել արաբական ժամանակակից պատմագրութեան մէջ:

Մենք պիտի ջանանք տալ արաբ պատմաբանների կարծիքները այդ ջարդերի բնոյթի մասին, ինչպէս նաեւ նշել, ըստ արաբ պատմիչների, այն դրդապատճառները, որոնք օգտագործեց «Կարմիր» սուլթանը իր քաղաքականութիւնը՝ այսինքն հայկական ջարդերը իրագործելու համար:

Արաբական արդի պատմագրութեան մէջ իշխում է այն կարծիքը, թէ Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.-ի կողմից 1894–1896 թուականներին կազմակերպուած հայկական ջարդերը հանդիսացան նրա ջարդարարական եւ «Զուլումի» քաղաքականութեան առանցքը եւ ստացան համընդհանուր բնոյթ՝ ընդգրկելով հայկական վեց վիլայէթները՝ Էրզրում, Խարբերդ, Սվազ, Պիթլիս, Վան, Տիարպեքիր, ինչպէս նաեւ հայաբնակ բոլոր շրջանները եւ մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը[22]:

Միաժամանակ արաբ պատմաբանները չեշտում են նաեւ այն միտքը, թէ Պերլինի Վեհաժողովից յետոյ սուլթանական Թուրքիան մշակեց եւ խորամանկօրէն կեանքի կոչեց հայերի բնաջնջման իր նողկալի ծրագիրը: Ըստ արաբ հեղինակների՝ սուլթան Ապտիւլ Համիտ Բ.-ի իրագործած հայկական այս քաղաքականութիւնը, կամ այլ կերպ ասած՝ հայկական ջարդերը մաս էին կազմում նրա վարած ներքին քաղաքականութեան[23]:

Համաձայն արաբ պատմաբանների՝ Համիտեան հակահայկական քաղաքականութիւնը աւելի բացայայտ դարձաւ 1890-ական թուականներին, երբ Ապտիւլ Համիտ Բ.-ի 1891-ի որոշումով ստեղծուեց Համիտեան Հեծելազօրը, որը կազմուած էր բացառապէս քրտերից[24]:

Համիտիէ Հեծելազօրի ստեղծումը մի մեծ չարիք դարձաւ հայ ժողովրդի գլխին: «Համիտիէ զօրագունդը պարզապէս կազմուած էր ընդդէմ հայերու»[25]:

Յենուելով պատմական փաստաթղթերի վրայ՝ արաբ պատմաբանները ընդգծում են Համիտեան Հեծելազօրի դերը հայերի բնաջնջման գործում: Նրանք միաժամանակ չեշտում են այն միտքը, թէ 1894–1896 թուականներին հայկական կոտորածների իրական պատասխանատուն ինքը՝ Ապտիւլ Համիտ Բ.-ն էր: Այսպէս՝ Մուսա Փրենսը Ապտիւլ Համիտի հայկական ջարդերը անուանելով

«Համիտեան Հայասպանութիւն»՝ Ապտիւլ Համիտին որակում է որպէս «Մեծ Ոճրագործ» եւ գրում. «... Ապտիւլ Համիտ յաջողեցաւ ճգմումի իր քաղաքականութեան մէջ: 1894-ին, շատ մը հայեր բնաջնջուեցան աննկարագրելի ջարդերուն մէջ Սասունի եւ հայկական բոլոր այլ նահանգներու, ուր ցեղասպանութիւնը ընդհանրացաւ 1895-էն 1896: Հակառակ անոր որ միջազգային քննիչ յանձնախումբ մը հաստատեց Թուրք կառավարութեան մեղսակցութիւնը եւ մասնակցութիւնը այդ ջարդերուն, հակառակ անոր որ «Համիտիէ» հեծելազօրքը մինչեւ ծունկը արիւնի մէջ թաթախուեցաւ իբրեւ ջարդարար՝ «Մեծ Ոճրագործը» մնաց անպատիժ»[26]:

Համաձայն արաբ պատմաբաններուն, 1894-1896 թ.թ. «Կարմիր» սուլթանի կողմից կազմակերպուած ջարդերը իրենց բնոյթով համընդհանուր, անմարդկային, բարբարոսական էին եւ ահարկու եղեռն՝ հայութեան դէմ:

Արաբական արդի պատմագրութեան մէջ արծարծուած է նաեւ 1894-1896 թ.թ. ոճրագործութիւնը կազմակերպելու եւ արդարացնելու համար սուլթան Ապտիւլ Համիտի կողմից օգտագործուած դրդապատճառների եւ պատրուակների հարցը: Իրենց աշխատութիւններում արաբ հեղինակները բացայայտում են Կարմիր Սուլթանի կողմից հայկական ջարդերը կազմակերպելու եւ դրանք արդարացնելու համար տրուած բոլոր դրդապատճառների ստայոդ լինելը:

Նրանք նշում են, որ օսմանեան բռնակալները իրենց հակահայ, ջարդարարական քաղաքականութիւնը իրագործելու համար որպէս առիթ օգտագործել են արեւմտեան հատուածի հայ ժողովրդի օրինական պահանջները՝ Արեւմտեան Հայաստանում բարեփոխութիւններ կենսագործելու վերաբերեալ: Այս կապակցութեամբ՝ վերլուծելով արեւմտահայերի պահանջների հետ առընչուող 1878-ի Փետրուարի 19-ին Սան Ստեֆանոյում կնքուած պայմանագրի 16-րդ յօդուածը եւ ապա՝ Յուլիսի 13-ին կնքուած Պերլինի 61-րդ յօդուածը՝ արաբ պատմաբանները ընդգծում են որ Սան Ստեֆանոյի 16-րդ յօդուածի համաձայն Բարձրագոյն Դուռը պարտաւորուում էր տեղական պահանջներից բխող բարենորոգումներ կենսագործել հայկական նահանգներում՝ ռուսական զօրքերի առկայութեան պայմաններում եւ ապահովել քրիստոնեաների անվտանգութիւնը քրտերից եւ չերքէզներից[27]:

Սակայն Սան Ստեֆանոյի հաշտութեան պայմանագրի շուրջ ծաւալուեց դիւանագիտական բարդ պայքար, որն ուղղուած էր Ցարական Ռուսաստանի դէմ: Եւրոպական պետութիւնների համար անհանդուրժելի էր Ռուսաստանի յաղթանակը: Նրանց համար

«Հիւանդ Մարդ»ու՝ Օսմանեան Կայսրութեան պահպանումը աւելի շահաւէտ էր՝ քան յօգուտ Ռուսաստանի նրա փլուզումը։ Անդրադառնալով այս հարցին՝ արաբ պատմաբանները չեչտում են, թէ Մեծ Պետութիւնների շահերը պահանջում էին պահպանել Օսմանեան Կայսրութեան գոյութիւնը ընդդէմ ռուսական ծաւալապաշտութեան[28]։

Յայտնի է, որ արեւմտահայութիւնը չստացաւ 16-րդ յօդուածով նախատեսուող բարենորոգումները։ Այդ առընչութեամբ Մուսա Փրենսը գրում է. «անգլեւռուս մրցակցութիւնները եւ պիզմարքեան մաքիաւելականութիւնը արգելք եղան այդ իրաւունքներու տիրացման ու Սան Ստեֆանոյի 16-րդ յօդուածը փոխարինուեցաւ Պերլինի դաշնագրին 61-րդ յօդուածով, որ նուազ ազդու էր»[29]։

Ցարական Ռուսաստանի յաղթանակը եւ Սան Ստեֆանոյի պայմանագիրը Եւրոպայում քաղաքական փոթորիկ առաջացրեցին։ Մասնաւորաբար Անգլիայի եւ Աւստրիայի կառավարող շրջանները վճռական քայլերի դիմեցին եւ պահանջեցին միջազգային ժողով հրաւիրել վերանայելու համար Սան Ստեֆանոյի պայմանագիրը։ Եւ պատահական չէ, որ 1878 թուի Յունիս 13-ին հրաւիրուեց Պերլինի Վեհաժողովը, որը իր նիստերը աւարտեց Յուլիսի 13-ին։

Եթէ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ յօդուածով Արեւմտեան Հայաստանում նախատեսուող բարենորոգումները պիտի իրագործուէին Արեւմտեան Հայաստանում ռուսական զօրքերի գոյութեան պայմաններում՝ ապա Պերլինի 61-րդ յօդուածը, որը վերաբերում էր արեւմտահայերին, նախատեսում էր այդ բարենորոգումների իրագործումը Արեւմտեան Հայաստանում՝ ռուսական զօրքերի անյապաղ հեռացման հետ։

61-րդ յօդուածով Բարձրագոյն Դուռը պարտաւորւում էր բարենորոգումների համար ձեռք առած իր միջոցառումների մասին հաղորդել Մեծ Տէրութիւններին, որոնք պէտք է որ հսկէին դրանց կիրառումը։ «Սան Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ յօդուածը Պերլինի համաձայնագրի 61-րդ յօդուածով փոխարինելը նրշանակում էր հայերին հետաքրքրած խնդիրների լուծումը վերցնել Ռուսաստանի ձեռքից եւ յանձնել եւրոպական տէրութիւնների տրնօրինութեանը»[30]։

Պերլինի Վեհաժողովը «օրինականացրեց Օսմանեան Կայսրութեան ներքին գործերին Մեծ Տէրութիւնների միջամտութեան աւանդական քաղաքականութիւնը — մի քաղաքականութիւն, որը

ոչ մի լաւ բան չէր տալու հայ ժողովրդին, բացի թուրքական սուլթանի կատաղութիւնը գրգռելուց»[31]:

Արաբ ժամանակակից պատմաբանները նկատել են, որ Պերլինի պայմանագրի 61-րդ յօդուածով Արեւմտեան Հայաստանի հայերը չօշափելի ոչինչ ստացան: Օսմանեան Կայսրութիւնը չիրագործեց խոստացուած բարենորոգումները, այլ, ինչպէս շեշտում են արաբ հեղինակները, օրէցօր աւելի ուժեղացրեց բռնութիւնները օսմանեան հայերի նկատմամբ[32]:

Արաբ հեղինակները իրենց ուսումնասիրութիւններում մերկացնում են այն կեղծիքն ու խեղաթիւրումները, որոնց դիմում էր համիտեան բռնապետութիւնը ջարդերի համար ողջ պատասխանատուութիւնը իրենց իսկ զոհերի՝ հայերի վրայ բարդելու նպատակով, որպէս պատրուակ ունենալով նրանց օրինական պահանջները:

Թէեւ Պերլինի Վեհաժողովին մասնակցելու համար Յունիսի 13-ին Պերլին էր ժամանել նա՛եւ հայ պատուիրակութիւնը Մկրտիչ Խրիմեանի գլխաւորութեամբ՝ բայց նրան մասնակից չդարձրին Վեհաժողովին: Սակայն հայ պատուիրակութեանը յաջողուեց Վեհաժողովին ներկայացնել մի յուշագիր, որը բովանդակում էր հայկական ինքնավարութեան ծրագիրը եւ հայերի գլխաւոր պահանջները:

Իրազեկ լինելով արեւմտահայերի ներկայացրած յուշագրի բովանդակութեանը՝ արաբ պատմաբանները շեշտում են այն հանգամանքը, որ հայերի նարկայացրած ծրագրում Օսմանեան Կայսրութիւնից անջատուելու խնդիր չէր առաջադրւում: Այդ ծրագիրը պարզապէս յանգելու էր պետութիւնների վերահսկողութեան տակ վարչական ինքնավարութեան ձեռք բերմանը հայկական նահանգներում, ինչպէս այդ իրագործուել էր Լիբանանում՝ 1861-ին:

Մուսա Փրենսը այդ մասին գրում է. «Լիբանանեան նախընթացէն քաջալերուած՝ հայերը կը փափաքէին վարչական համեստ ինքնավարութիւն մը, շատ աւելի նուազ պահանջկոտ՝ քան Լեռնալիբանանի միջազգային իրաւակարգը: Կ'ուզէին ունենալ Հայաստանի մէջ ապրող թուրքերու հաւասար իրաւունքներ եւ պարտաւորութիւններ: Իսկապէս որ մեծ չէր անոնց պահանջը»[33]:

Ֆուատ Հաֆիզը անդրադառնալով այդ հարցին՝ նոյն միտքն է արտայայտում իր գրքում, եւ նշում, որ հայերը «չէին պահանջում անջատուել Օսմանեան Պետութիւնից, այլ նրանց պահանջները սահմանափակւում էին քրիստոնէական ինքնավար վարչութեամբ՝ միջազգային երաշխիքով, ինչպէս Լիբանանի միջազգային իրաւակարգը՝ հրապարակուած 1861-ին»[34]:

Միանգամայն յստակ ու յայտնի է, որ արեւմտահայերի պահանջները չէին յանգում Արեւմտեան Հայաստանի անկախութեան, այլ դրանք յանգում էին արեւմտահայերի վիճակը բարելաւելու բարենորոգումներին, եւ չէին սպառնում Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեանը:

Հետեւաբար՝ արաբ պատմաբանների գործերը հաստատում են, որ 1894–1896 թուականներին Ապտիւլ Համիտի կողմից կազմակերպուած ջարդերի մէջ հայ ժողովուրդը մեղք չունէր եւ միանգամայն կեղծիք էր նրան անջատողական ձգտումներ վերագրելը, եւ որ այդ վարկածը յօրինել էր Համիտեան բռնակալութիւնը՝ նպատակ ունենալով արդարացնելու «Մեծ Ոճրագործի» ջարդարարական հակահայ քաղաքականութիւնը:

Արաբ պատմաբանների տեսադաշտից չի վրիպել նաեւ հետեւեալ հանգամանքը, որը օգտագործեց «Կարմիր» սուլթանը իբրեւ շարժառիթ հայերի նկատմամբ իր ջարդարարական քաղաքականութիւնը իրագործելու եւ չքմեղացնելու համար: Պատմական փաստ է, որ 1877–1878 թուերին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կովկասեան ռազմաճակատում ռուսական զօրքերի տարած յաղթանակների գործում իրենց մասնակցութիւնը ցուցաբերեցին նաեւ արեւելահայերը՝ ռուսական զօրքերի կողքին արիաբար մարտնչելով թուրքի դէմ: Աւելին՝ կովկասեան ռազմաճակատում ռուսաց բանակի հրամանատարութեան կազմում էին անուն վաստակած հայազգի զօրավարներ՝ Միքայէլ Լորիս Մելիքովը, Արշակ Տէր-Ղուկասովը, Յովհաննէս Լազարեւը, Շելկովնիկովը եւ ուրիշ զինուորականներ:

Ժամանակակից արաբ պատմաբանները իրենց գործերում շեշտում են այն միտքը, թէ կովկասեան ռազմաճակատի ռազմական գործողութիւնների ժամանակ նրանք մեծ յաջողութիւնների հասան Արեւմտեան Հայաստանում եւ գրաւեցին Կարսը, Արտահանը, Էրզրումը եւ Պայազէտը[35]:

Պատերազմի աւարտից յետոյ, երբ Ռուսաստանը յաղթանակած դուրս եկաւ, Ապտիւլ Համիտը այդ բանի համար դաժան դատաստան տեսաւ արեւմտահայ ժողովրդի հետ: Նրա թշնամանքը էլ աւելի սաստկացաւ եւ սանձարձակ դարձաւ հայերի նկատմամբ, եւ կանխամտածուած ճնշման քաղաքականութիւնը վերածուեց բնաջնջման քաղաքականութեան:

Այդ կապակցութեամբ եգիպտացի պատմաբան Ֆուատ Հաֆիզը գրում է. «Հայերի ջարդերը սկսուեցին սուլթան Ապտիւլ Համիտ Բ.-ի շրջանում՝ 1877 թուին ռուս-օսմանեան պատերազմի վերջաւորութեանը:

«... Եւ այդ՝ որպէս պատիժ օսմանեան հայերին այն բանի համար, որ նրանց ռուսահայ եղբայրները մասնակցել էին ռուսական արշաւանքին դէպի Անատոլիա եւ որը գլխաւորում էին երեք նշանաւոր ռուսահայ զօրավարներ՝ Միքայէլ Լորիս Մելիքովը, Արշակ Տէր-Ղուկասովը եւ Յովհաննէս Լազարեւը»[36]: Զբնդուներով արեւմտահայերին ներկայացուած այդ մեղադրանքը, եւ խորացնելով իր միտքը՝ նոյն հեղինակը շարունակում է. «օսմանեան հայերը պատասխանատու չէին այդ պատերազմից (1877-1878 թուի) առաջ երկու պետութիւնների՝ Օսմանեան Կայսրութեան եւ Ցարական Ռուսաստանի միջեւ Հայաստանի բաժանման համար, եւ ո՛չ էլ այն բանի համար՝ որ ռուսահայերը դարձել էին Ցարական Ռուսաստանի հպատակներ»[37]:

Մերկացնելով «Կարմիր» սուլթանի կողմից հայկական ջարդերը արդարացնելու համար նրա օգտագործած բոլոր պատճառաբանութիւնները՝ արաբ արդի պատմաբանները յանգում են այն ճշմարիտ եզրակացութեան, թէ «օսմանեան հայերի ջարդերը Օսմանեան Պետութեան անարդար եւ անօրինական պատասխանն էր նրանց արդար [եւ] օրինական պահանջներին, որոնք ունէին միջազգային հաստատում»[38]:

Արաբ արդի պատմագրութեան մէջ իշխում է այն ճշմարիտ տեսակէտը, թէ «Կարմիր» սուլթանի նշանաբանն էր Հայկական Հարցը լուծել հայերին կոտորելով[39]:

Ամփոփելով մեր խօսքը, նշենք, որ արաբական արդի պատմագրութիւնը համիտեան «զուլումի» քաղաքականութիւնը դիտելով որպէս նենգօրէն մշակուած եւ ամբողջական մի համակարգ, գտնում է, որ հակահայկականութիւնը կամ այլ կերպ ասած՝ «Համիտեան Հայասպանութիւնը» դարձել էր «զուլումի» քաղաքականութեան բնորոշիչ կողմերից մէկը եւ նրա բաղկացուցիչ մասն էր կազմում:

Հայ ժողովուրդի պատմութեան «զուլումի» ժամանակաշրջանի հետ առնչուող սկզբունքային հարցերը արաբական ժամանակակից պատմագրութեան մէջ մեկնաբանւում են գիտական անաչառութեամբ եւ պատմականութեան արդարացի դիրքերից:

Արաբական արդի պատմագիտական նման աշխատութիւնները միաժամանակ մերկացնում են «զուլումի» քաղաքականութեան հետապնդած խնդիրների ճշմարիտ պատկերը աղաւաղող բոլոր փորձերը, եւ փաստում են, որ 1894-1896 թուականների հայկական կոտորածների իսկական պատասխանատուն ինքը՝ արիւնարբու Ապտիւլ Համիտ Բ.-ն էր:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. عثمان ج. الترك، **صفحات من تاريخ الأمة الأرمنية**، حلب، ١٩٦٠.
2. مروان المدوّر، **الأرمن عبر التاريخ**، بيروت، ١٩٨٢
3. فؤاد حسن حافظ، **تاريخ الشعب الأرمني منذ البداية حتى اليوم**، القاهرة، ١٩٨٦.
4. سمير عربش، **أرمينية : أرض وشعب**، بيروت، ١٩٩١.
5. Moussa Prince, **Le génocide ou «Les dimensions modernes du massacre collectif premedité»**, vol. 2, **Un génocide impuni : L'Arménocide**, Beyrouth, 1988.
6. صالح زهر الدين، **الأرمن شعب وقضية**، بيروت، ١٩٨٨.
7. Լէօ, **Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը**, հտ. Ա., Փարիզ, 1934, էջ 109:
8. Նոյն, էջ 116:
9. Ռ. Սահակեան, **Ցեղասպանութեան պատմութիւնից**, Երեւան, 1990, էջ 277-278:
10. Լէօ, էջ 117:
11. **Փորձ**, ազգային եւ գրական միամսեայ հանդէս, թիւ 7-8, Տփխիս, 1879, էջ 205:
12. Սահակեան, էջ 278:
13. سمير عربش، ص. ١٢٣.
14. فؤاد حسن حافظ، ص. ٢٠١.
15. سمير عربش، ص. ١٢٣.
16. فؤاد حسن حافظ، ص ٢٠١.
17. مروان المدوّر، ص. ٣٩٥.
18. Մուսա Փրենս, **Անպատիժ Ցեղասպանութիւն մը՝ Հայասպանութիւնը** (թարգմանեց՝ Տիգրան Ոսկուճի), Պէյրութ, 1969, էջ 35:
19. Նոյն, էջ 36:
20. فؤاد حسن حافظ، ص. ٢٠٢.
21. عثمان الترك، ص. ١٩١.
22. فؤاد حسن حافظ، ص. ٢٠٨ – ٢١٢ وأيضاً سمير عربش، ص. ١٣٠، عثمان الترك، ص. ٢٠٠.
23. فؤاد حسن حافظ، ص. ٢٠٣.
24. فؤاد حسن حافظ، ص. ٢٠٩ وأيضاً سمير عربش، ص. ١٢٨، عثمان الترك، ص. ١٩٨ – ١٩٩، مروان المدوّر، ص. ٣٩٨.
25. Գուրգէն Եազրճեան, **Ապտիկ Համիտ Բ.՝ Կարմիր Սուլթանը**, Պէյրութ, 1980, էջ 396:
26. Մուսա Փրենս, էջ 35-36:
27. فؤاد حسن حافظ، ص. ١٩٨.
28. Նոյն, էջ 198:
29. Մուսա Փրենս, էջ 35:

30. Ջ. Կիրակոսեան, **Բուրժուական Դիւանագիտութիւնը եւ Հայաստանը** (19-րդ դարի 70-ական թթ.), Երեւան, 1978, էջ 283:
31. Նոյն, էջ 284:
32. سمير عريش، ص. ١٢٤.
33. Մուսա Փրենս, էջ 35:
34. فؤاد حسن حافظ، ص. ١٩٩.
35. Նոյն, էջ 197:
36. Նոյն, էջ 208:
37. Նոյն:
38. Նոյն, էջ 204:
39. مروان المدوّر، ص. ٣٦٧.

Ա. Թ.

THE PRESENTATION OF THE OPPRESSIVE POLICY OF SULTAN ABDUL HAMID IN MODERN ARAB HISTORIOGRAPHY

Dr. A. H. TOPALIAN

(SUMMARY)

The modern Arab historiography has recently lengthily dwelt upon the Armenian-Turkish relations in the fourth quarter of the nineteenth century, the period known as «the period of the oppressive policy of Sultan Abdul Hamid II, the Red Sultan».

After his ascension to the Ottoman throne, Abdul Hamid II decided to get rid of the Armenian Question by getting rid of the Armenian people of the Ottoman Empire, thus doing away the reason for European interference with the internal affairs of the Ottoman Empire.

Thus started the period of oppression just after the Conference of Berlin which by changing the clause N° XVI of the Russo-Turkish Treaty of San Stefano to clause N° LXI of the Treaty of Berlin, let the Sultan loose to deal with his Armenian subjects in the way he preferred, in spite of the promise to introduce the locally required reforms in the six Armenian provinces of Western Armenia. The result was the period of the first great massacres of Armenians in 1894-1896.

The story of the beginning of the annihilation of the Armenian population of the Ottoman Empire in the days of Sultan Abdul Hamid II is deeply dealt with by the Arab historians of modern time. In fact, by making use of the works of Othman el-Turk, Marwan el-Medawar, Fuad Hasan Hafez, Samir Arbash, Mousa Prince and Saleh Zahr ed-Din, Dr. Topalian has drawn a picture of the Armenian Massacres of the last quarter of the nineteenth century by which to conclude that the Arab historians of the modern times present an impartial and scientific approach to the Armeno-Turkish problem and find the period under discussion a time of oppression, bloodshed, death and annihilation, just because of the fact that in a period of only about two and a half years (1894-1896) some 300.000 Armenians were massacred. It is through an honest and conscious approach that the Arab historians mentioned have been able to present not only the Sultan's policy of anti-Armenian oppression but also to point and prove the truth of the facts which the Ottoman and Turkish historiography tries to falsify and defraud. The modern Arab historians show that the real and only responsibility for the Armenian massacres of 1894-1896 fall on the Sultan himself.